

կ'ըլլայ իր համայնքին մէջ փոխադրու-
թեան Եւրոպայի քանի գիտուններու մէջ
վերընծիւղած թթու և մոլի ազգայնական-
ներու կրօնամբօք ցեղապաշտութեան: Մո-
լորութիւն մը՝ որ կը յաւակնի հեթանոս
դարերու հինցած ու փտած դրութիւն մը
վերակենդանացնել, ու ցեղի աստուածա-
ցումին մէջ ընկղմել ու չքացնել գերագոյն
Աստուածը տիեզերքին Արարիչ:

Հաճի՛ք է շեշտել թէ կոպիտ սխալ մ'է
դա իմաստասիրօրէն, քանի որ կը ճգնի
մերժել հաւասարութիւնն և եղբայրութիւ-
նը մարդկութեան ցեղերուն և անհատին.
սխալ մը նաեւ հանդէպ պատմութեան և
մոռացօնք մը, քանի որ կ'անտեսէ անոր
անջնջելի էջերուն մէջ արձանագրուած
պարտութիւնը աստուածացած հեթանոս
Հոռմի՝ քրիստոնէութեան ձեռքով. և խո-
նարհ երկրպագութիւնը խաչին առջեւ
տիեզերակալ Կոստանդիանոսներու և Նա-
փոլէոններու:

Բայց ալ ժամն է տեսնելու որ Կրօնքը,
Աստուած, Հաւատքը՝ աւելի փառահեղ և
յաղթական վերադարձ մ'ունի Արեւմտեան
քաղաքակրթութեան մէջ:

Սակայն դատապարտութիւնը հայ մա-
մուլին է որ նման մուրով կը սեւցնէ իր
էջերը, և աւելի հայ համայնքին՝ որ կը
լռէ իր նուիրական համոզումներուն այս-
քան գոհկօրէն ոտնակոխուելուն հանդի-
սատես: Այսօր հայ Հաւատքն ալ կը փոր-
ձուի խլել հայ հոգիէն, հայ Հաւատքը՝
որ մեր փառքերուն միակ աղբիւրն եղաւ:
Կը համարուի արդեօք որ հայ դրօշը նիւ-
թապաշտ ազգայնութեան խարխիւին վրայ
աւելի ամուր մնայ. այս կը նմանի հոսա-
նուտ ջուրի վրայ աշտարակ խարխիւու:
Թող Եւրոպայի և Ամերիկայի արդիա-

կան կրօնական հսկայաքայլ շարժումները
փրկագործութեան մեծ խորհուրդին վերա-
նորոգիչ շունչով՝ հայ ողջամիտ մամուլի,
հայ կրթական հաստատութեանց, և աւելի
հայ եկեղեցական կազմակերպութիւններու
ուշադրութիւնը շարժէ ըմբռնելու կացու-
թեան ծանրակշիռ հանգամանքը: Չըլլայ
թէ Արեւմուտքի անխուսափելի խմորմանց
մրուրը հայ սրտերու յատակը դիզուի: Հա-
յուն կեանքը կ'ապահովուի լծորդումին
մէջ ուղիղ և ողջամիտ գծով ազգասիրու-
թեան՝ Քրիստոսականը և Գրիգորականը
Հաւատքին սրբութեան և անեղծութեան
հետ: Քրիստոս չեկաւ թագերը կապտելու.
ընդհակառակն, Նա ամրացուց զանոնք
յաւերժական հիմքերուն վրայ ճշմարտու-
թեան. և ոչ ալ եկաւ ազգերը ցրելու:
Ապացոյց մեզի՝ հայ թագը և հայ ինքնու-
թեան գիտակցութիւնը, որուն ամուր հի-
մքը 36 հայ տառերու վրայ հաստա-
ուեցան, և 36 տառերը՝ համայն ազգային
մատենագրութեան գրադարաններով՝ հայ
Հաւատքին և հայ Եկեղեցականութեան
բոլոր եռանդին յղացումն և ստեղծագոր-
ծութիւնն են: Եթէ ոչ Ս. Հաւատքի մաք-
րութեան սիրոյն, որ գերբնական տուրք
մ'է, գոնէ հայ գոյութեան ընձեռուած
անհամար երախտեաց համար յարգուի
հայուն լոյս Հաւատքը և Եկեղեցին: —
Ոչ ոք իրաւացիօրէն հիմ ունի խիթալու
Քրիստոսի հաւատքին ամբողջական ընդ-
գրկումէն, և ոչ ալ յաւակնի կաթողիկէ
մը Քրիստոսի ամբողջական աւանդութեան
լրիւ հաւատարիմ մնալ եթէ գիտակցաբար
կ'արհամարհէ կամ կ'անտեսէ իր ցեղին և
ազգի և արեւան ՆՈՒԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՆ
ու ԱՐԺԷՔՆԵՐԸ:

ԽՄԲ.

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ 50-ԱՄԵԱՅ ՅՈՒԵԼԵԱՆ

ԱՄԵՆ. ՏՆ. ԱԿԵՏԻՍ ՊԵՏՐՈՍ ԺԴ՝

ԿԱԹՈՂԻԿՈՍ - ՊԱՏՐԻԱՐԺ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Քրիստոսական 1900 ամեայ մեծ Յոբելեանի շնորհաշուք հանդէսները փակուած են
ի Հռոմ: Քախանայապետական կոնդակ մը զայն կը սփռէ ամբողջ աշխարհի: Եւ ամա-
փրկագործութեան Զոհին եւ Քրիստոսի Քախանայութեան տիեզերական այդ տօնա-
խմբութեան զուգընթաց, տիեզերական Եկեղեցւոյ մեծ խրախճանքին մէջ Հայ Կաթո-
ղիկէ հասարակութեան ծոցին մէջ ալ հոգեւոր խրախճանք մը Գերագոյն Քախանայա-
պետի քախանայութեան դարադարձին հետ զուգուած յիսնամեայ յոբելեանը նոր Ուխտի
սրժանընտիր քախանայի մը եւ մեծ հայրապետի՝ Ն. Ս. Աւետիս Պետրոս ԺԴ Արփա-
րեան Կաթողիկոսի:

1884 թ. Մարտի 9 ն էր. Պալճեան Աղեքսանդր եպիսկոպոս Աստուծոյ խորհրդոց
պաշտօնեայ մը կը ձեռնադրէր Ակնի խոնարհ զաւակ մը՝ Աւետիս Արփիարեան, որ
մեծ ըլլալու սահմանուած էր:

Այդ օրուան տեսիլն է ահա — վերնատուն և Գողգոթա միանգամայն — որ կը
տօնախմբուի:

Այդ օրէն կը սկսէր սրբասէր քահանային առաքելական կեանքը, հոգիներու հո-
գը, որ փոքրիկ շրջանակէ, զաւառի խոնարհ աւաններէն պիտի երթար մինչեւ մայ-
րաքաղաք, պարզ քահանայութեան վիճակէն պիտի բարձրանար մինչեւ զուլիւ Հայ
Կաթողիկէ Եկեղեցւոյ Նուիրապետութեան:

Ճամբան զոր կտրեց անցաւ իր հօտին համար և անոր հետ՝ լի է ծաղիկներով և
փուշերով. ծաղիկներն իր սէրն ու ժպիտն են և բարեգործութիւնները անոր համար.
ու փուշերը՝ վշտերն ու արցունքը զոր կրեց ու թափեց իր սիրելի հօտին համար
աւրհաւիրքի և արիւնի օրերուն, մինչեւ որ ի սփոփանս վերապրող մեր բեկորներուն՝
աւրհաւիրքի և արիւնի օրերուն, մինչեւ որ ի սփոփանս վերապետութեան հօգը Աջը, ու կը պարգեւէ օր-
ուանս գեղեցիկ և ոգեպարար հրճուանքները՝ Հովուի և հօտի միանգամայն:

Նորընծայ քահանան կը կարգուէր իսկոյն տեղակալ մեծաւոր Հոռմի հայ կղե-
րանոցին. պաշտօն՝ որ նախանկարը կը թուէր ապագային ունենալիք իր կոչումին,
որուն գրաւականն էր իմաստուն և խաղաղասէր իր բարքը:

Եւ արդէն շուտով կը բացուէր առաքելական կեանքի ասպարէզը դէպ ի հայրենի
զաւառները: Ով որ նկատէ աղքատիկ Զնցուշի աղքատիկ հովիւը 1885 — 1887 թն,
խակապէս կենցաղի նմանութիւն մը պիտի գտնէ Փրկչին և անոր վարածին միջեւ:
Արփիարեան քահանային ալ, ինչպէս երբեմն աշխարհի Փրկչին՝ բարեպաշտօն կին
մը կը հայթայթէր օրապահիկը ասկէց — անկէց:

Եթէ ճրագը գրուանի տակ չեն թաքցըններ, նոյնն եղաւ առաքելատիպ քահա-
նային, որ խոնարհ ու անծանօթ վայրէն կոչուեցաւ նախ առաջնորդ Արաբկիրի

